



ՀԿ

«Ես ապաստան եմ
հայցել ԵՄ-ում. ո՞ր
երկրի կողմից կքննվի
իմ գործը»:

Ա

Տեղեկատվություն միջազգային պաշտպանության
համար դիմողների վերաբերյալ Դուբլինի
Կանոնակարգի մասին՝ համաձայն թիվ 604/2013
Կանոնակարգի (ԵՄ) 4-րդ հոդվածի


Դուք մեզնից պաշտպանություն եք հայցել, քանի որ համարում եք, որ հարկադրված եք եղել լքել Ձեր երկիրը՝ հետապնդման, պատերազմի կամ լուրջ վտանգի պատճառներով: Օրենքով այն անվանվում է «դիմում/միջազգային պաշտպանության հայց», իսկ Դուք համարվում եք «դիմող»: Պաշտպանություն հայցող անձինք հաճախ կոչվում են «ապաստան հայցողներ»:

Այն փաստը, որ այստեղ ապաստան եք հայցել, չի երաշխավորում, որ մենք կքննենք Ձեր հայցը այստեղ: Ձեր հայցը քննելու համար պատասխանատու երկիրը որոշվում է Եվրոպական Միության օրենքով նախատեսված ընթացակարգի միջոցով, որը հայտնի է որպես «Դուբլինի Կանոնակարգ»: Համաձայն այդ օրենքի՝ միայն մեկ երկիր է պատասխանատու Ձեր հայցը քննելու համար:

Այս օրենքը տարածվում է 32 երկրներ ընդգրկող աշխարհագրական տարածաշրջանի վրա : Այս փաստաթղթում այդ 32 երկրներն անվանվում են «Դուբլինյան երկրներ»:

Եթե այս փաստաթղթի մեջ որևէ բան հասկանալի չէ Ձեզ համար, խնդրում ենք ճշտել մեր իշխանության մարմինների հետ:

Նախքան ապաստանի համար Ձեր հայցը քննելը, մենք պետք է պարզենք, թե արդյոք մենք, թե այլ պետություն է պատասխանատու այն քննելու. այն անվանվում է «Դուբլինի ընթացակարգ»: Դուբլինի ընթացակարգը չի առնչվում ապաստանի համար դիմելու Ձեր դրդապատճառներին: Այն միայն վերաբերում է այն հարցին, թե որ երկիրն է պատասխանատու որոշում ընդունելու ապաստանի մասին Ձեր դիմումի առնչությամբ:



Դուբլինյան երկրներն ընդգրկում են Եվրոպական Միության 28 երկրները (Ավստրիա (AT), Բելգիա (BE), Բուլղարիա (BG), Գերմանիա (DE), Դանիա (DK), Էստոնիա (EE), Իռլանդիա (IE), Իսպանիա (ES), Իտալիա (IT), Լատվիա (LV), Լիտվա (LT), Լեհաստան (PL), Լյուքսեմբուրգ (LX), Խորվաթիա (HR), Կիպրոս (CY), Հունաստան (EL), Հունգարիա (HU), Մալթա (MT), Միացյալ Թագավորություն (UK), Նիդերլանդներ (NL), Շվեդիա (SE), Չեխիայի Հանրապետություն (CZ), Պորտուգալիա (PT), Ռումինիա (RO), Սլովակիա (SK), Սլովենիա (SI), Ֆինլանդիա (FI), Ֆրանսիա (FR), ինչպես նաև Դուբլինի կանոնակարգին «ասոցացված» 4 երկրներ (Նորվեգիա (NO), Իսլանդիա (IS), Շվեյցարիա (CH) և Լիխտենշտեյն (LI)):

Այս փաստաթուղթն ունի միայն տեղեկատվական նպատակներ: Դրա նպատակն է միջազգային պաշտպանության համար դիմող անձանց անհրաժեշտ տեղեկատվություն տրամադրել Դուբլինի ընթացակարգի վերաբերյալ: Այն ինքնին չի ստեղծում կամ առաջացնում որևէ իրավունքներ կամ իրավական պարտավորություններ: Պետությունների և քաղաքացիների՝ ըստ Դուբլինի ընթացակարգի ունեցած իրավունքներն ու պարտականությունները սահմանված են թիվ 604/2013 Կանոնակարգում (ԵՄ):

©Եվրոպական Միություն 2014
Վերարտադրությունը թույլատրված է: Ցանկացած նպատակով օգտագործման կամ առանձին լուսանկարների վերարտադրության համար՝ պետք է անմիջականորեն վերցնել հեղինակային իրավունքի սեփականատերերի թույլտվությունը:

«Որքա՞ն է ժամանակ է անհրաժեշտ՝ որոշելու համար, թե որ պետությունն է քննելու իմ դիմումը»:

«Որքա՞ն ժամանակ է անհրաժեշտ մինչև իմ դիմումի քննելը»:

Եթե մեր իշխանության մարմինները որոշեն, որ մենք ենք պատասխանատու ապաստանի Ձեր դիմումի վերաբերյալ որոշում ընդունելու հարցում, ապա կարող եք մնալ այս երկրում և Ձեր դիմումը քննության կենթարկվի այստեղ: Այդ դեպքում Ձեր դիմումը քննելու գործընթացը կսկսվի անհապաղ:

Եթե որոշենք, որ այլ երկիր է պատասխանատու Ձեր դիմումի առնչությամբ, մենք ուղիներ կորոնենք, հնարավորինս շուտ, Ձեզ այդ երկիր ուղարկելու համար, որպեսզի Ձեր դիմումը քննվի այնտեղ: Դուք ինչի ողջ ընթացակարգը, նախքան Դուք կտեղափոխվեք տվյալ երկիր, **սովորական հանգամանքների դեպքում, կարող է տևել մինչև 11 ամիս:** Ձեր ապաստանի հայցն այնուհետև կքննվի այդ պատասխանատու երկրի կողմից: Այս ժամանակամիջոցը կարող է տարբեր լինել, եթե թաքնվեք իշխանության մարմիններից, ձերբակալվեք, կալանավորվեք կամ բողոքարկեք տեղափոխման մասին որոշումը: Եթե գտնվում եք այս իրավիճակներից որևէ մեկում, ապա Ձեզ հատուկ տեղեկատվություն կտրամադրվի, թե Ձեր դեպքում ինչ ժամանակամիջոց է կիրառելի: Եթե կալանավորվեք, Ձեզ կտեղեկացվի կալանավորման պատճառների և Ձեզ համար մատչելի իրավաբանական պաշտպանության միջոցների մասին:



«Ինչպե՞ս է որոշվում, թե որ երկիրն է պատասխանատու իմ դիմումի համար»:



©iStockphoto / Joe Gough

Օրենքով սահմանված են տարբեր հիմքեր, թե ինչու է որևէ երկիր պատասխանատու Ձեր հայցը քննելու համար: Այդ հիմքերը դիտարկվում են ըստ օրենքով սահմանված կարևորության կարգի՝ սկսելով Նրանից, թե արդյոք որևէ ընտանիքի անդամ ունեք տվյալ դուբլինյան երկրում, այժմ կամ նախկինում ստացել եք վիզա կամ կեցության թույլտվություն տվյալ դուբլինյան երկրի կողմից, ճամփորդել եք դեպի այլ դուբլինյան երկիր կամ անցել եք տվյալ երկրով՝ օրինականորեն կամ անօրինական ձևով:

Կարևոր է, որ որքան հնարավոր է շուտ, մեզ տեղյակ պահեք, եթե ընտանիքի անդամներ ունեք այլ դուբլինյան երկրում: Եթե Ձեր ամուսինը, կինը կամ երեխան հանդիսանում է ապաստանի համար դիմող կամ Նրան շնորհվել է միջազգային պաշտպանություն այլ դուբլինյան երկրում, ապա այդ երկիրը կարող է պատասխանատու լինել Ձեր ապաստանի դիմումի քննության համար:

Մենք կարող ենք որոշել Ձեր դիմումը քննել այս երկրում, նույնիսկ եթե այդ քննությունը մեզ չի վերապահված՝ համաձայն Դուբլինի Կանոնակարգով սահմանված չափանիշների: Մենք Ձեզ չենք ուղարկի մի երկիր, որտեղ հայտնի է, որ Ձեր մարդու իրավունքները կարող են ոտնահարվել:

«Ի՞նչ է կլինի, եթե ես չեմ ցանկանում գնալ այլ երկիր»:

Դուք հնարավորություն ունեք հայտնելու, որ համաձայն չեք Ձեզ այլ դուբլինյան երկիր ուղարկելու որոշման հետ և կարող եք վիճարկել այդ որոշումը դատարանում կամ ատյանում: Կարող եք նաև խնդրել մնալ այս երկրում, մինչև Ձեր բողոքարկման կամ վերանայման մասին որոշում ընդունվի:

Եթե լքեք ապաստանի համար տրված Ձեր դիմումը և տեղափոխվեք այլ դուբլինյան երկիր, ապա հավանական է, որ Ձեզ ետ ուղարկեն այս երկիր կամ Ձեր գործով պատասխանատու երկիր:

Այդ պատճառով կարևոր է, որ ապաստանի համար դիմելուց հետո մնաք այստեղ, մինչև մենք որոշում ընդունենք, թե ով է պատասխանատու Ձեր ապաստանի հայցի քննման համար և/կամ քննության ենթարկենք Ձեր ապաստանի հայցը այս երկրում:

Խնդրում ենք տեղյակ լինել, որ եթե զգանք հավանականություն, որ կարող եք փախուստի դիմել կամ թաքնվել մեզնից, քանի որ չեք ցանկանում, որ Ձեզ ուղարկենք այլ երկիր, Ձեզ կարող ենք կալանքի տակ վերցնել (փակ կենտրոնում): Այդ դեպքում Ձեզ իրավունք կընձեռնվի ունենալ իրավական ներկայացուցիչ և տեղեկություններ կտրամադրվեն Ձեր այլ իրավունքների, ներառյալ կալանավորման դեմ բողոք ներկայացնելու իրավունքի մասին:



©iStockphoto / jamp013

«Ինչու՞ է ինձնից պահանջվում հանձնել մատնահետքեր»:

Երբ Դուք ապաստանի հայց եք ներկայացնում, եթե 14 տարեկան եք կամ ավելի, Ձեզնից մատնահետքեր են վերցվում և հանձնվում մատնահետքերի տվյալների բազային, որ կոչվում է «Eurodac»: **Պետք է համագործակցեք մեզ հետ այս գործընթացի ժամանակ, քանի որ օրենքով պարտավոր եք մատնահետքեր հանձնել:**

Եթե Ձեր մատնահետքերը լավ որակի չլինեն, այդ թվում եթե դիտավորյալ վնասած լինեք Ձեր մատները, ապա մատնահետքերը հետագայում կրկին կվերցվեն:

Ձեր մատնահետքերը կստուգվեն Eurodac-ում՝ ճշտելու համար, թե արդյոք նախկինում երբևէ դիմել եք ապաստանի համար կամ նախկինում Ձեզնից մատնահետք են վերցրել սահմանային կետում: Սա օգնում է որոշել, թե որ դուբլինյան երկիրն է պատասխանատու Ձեր ապաստանի հայցի քննման համար:

Ձեր մատնահետքերը կարող են նաև ստուգվել Վիզայի տեղեկատվական համակարգի (VIS) միջոցով, որն իրենից ներկայացնում է Ծենգենյան տարածքում տրված վիզաների տվյալների բազա: Եթե ունեք այլ դուբլինյան երկրի ընթացիկ կամ նախկին վիզա, ապա

Ձեզ կարող են ուղարկել այնտեղ՝ միջազգային պաշտպանության Ձեր գործի քննության համար:

Քանի որ ապաստանի դիմում եք ներկայացրել, Ձեր մատնահետքերի տվյալները կպահվեն Eurodac-ում 10 տարի. 10 տարի անց դրանք ինքնաբերաբար կջնջվեն Eurodac-ից: Եթե ապաստանի Ձեր հայցը հաջող ընթացք ունենա, ապա Ձեր մատնահետքերը կպահպանվեն տվյալների բազայում՝ մինչ դրանց ինքնաբերաբար ջնջումը: Եթե դառնաք որևէ դուբլինյան երկրի քաղաքացի, Ձեր մատնահետքերն այդ պահին կջնջվեն: Ձեր մատնահետքերը և գենդերային տվյալները կպահպանվեն Eurodac-ում. Ձեր անունը, լուսանկարը, ծննդյան ամսաթվի և ազգության մասին տվյալները չեն ուղարկվում Eurodac բազային, բայց դրանք կարող են պահպանվել ազգային տվյալների բազայում:

Դուք կարող եք ապագայում ցանկացած ժամանակ մեզնից խնդրել Ձեզ անչվող տվյալները, որոնք արձանագրված են Eurodac-ում: Եթե գտնում եք, որ տվյալները ճշգրիտ չեն կամ չպետք է պահպանվեն, ապա կարող եք խնդրել, որ դրանք ճշտվեն կամ ջնջվեն: **Այս երկրում Ձեր տվյալներով զբաղվող (կամ դրանք կառավարող) իշխանության մարմինների մասին, ինչպես նաև տվյալների պաշտպանության վերահսկման համար պատասխանատու համապատասխան մարմինների մասին տեղեկություններ կարող եք գտնել էջ՝ 11-ում:**

Eurodac-ը կառավարվում է Եվրոպական Միության eu-LISA կոչվող գործակալության կողմից: Ձեր տվյալները կարող են օգտագործվել միայն օրենքով սահմանված նպատակներով: Միայն Eurodac կենտրոնական համակարգը կարող է ստանալ Ձեր տվյալները: Եթե ապագայում ապաստան խնդրեք այլ դուբլինյան երկրում, ապա Ձեր մատնահետքերը կուղարկվեն այդ երկիր՝ ստուգման համար: Eurodac-ում պահված տվյալները չեն փոխանցվի դուբլինյան երկրներից դուրս որևէ այլ երկրի կամ կազմակերպության:

2015թ. հուլիսի 20-ից Ձեր մատնահետքերը կարող են հետագուտվել ոստիկանության և Եվրոպական ոստիկանության (Եվրոպոլ) կողմից, որոնք կարող են Eurodac տվյալների բազայից օգտվելու հայց ներկայացնել՝ լուրջ բնույթի հանցագործությունների և ահաբեկչության կանխարգելման, հայտնաբերման և հետաքննման նպատակներով:

«Որո՞նք են իմ իրավունքները այն ժամանակամիջոցում, մինչ որոշվի, թե որն է իմ ապաստանի հայցի քննման համար պատասխանատու երկիրը»:

Դուք իրավունք ունեք մնալ այս երկրում, եթե մենք ենք պատասխանատու քննելու Ձեր ապաստանի հայցը կամ եթե այլ պետության է վերապահված այդ հարցը քննելը, ապա կմնաք այստեղ՝ մինչ Ձեզ այդ երկիր տեղափոխելը: Եթե այս երկիրն է պատասխանատու քննել Ձեր ապաստանի հայցը, Դուք իրավունք ունեք մնալ այստեղ առնվազն այնքան, մինչև Ձեր ապաստանի դիմումի վերաբերյալ ընդունվի առաջին որոշումը: Ձեզ նաև իրավունք է վերապահված օգտվել նյութական ապահովության միջոցներից, օր.՝ կացարան, սնունդ և այլն, ինչպես նաև ամենաանհրաժեշտ բժշկական օգնություն և արտակարգ իրավիճակների բուժապասարկում: Ձեզ հնարավորություն կընձեռնվի բանավոր և/կամ գրավոր կարգով մեզ տեղեկություններ տրամադրել Ձեր իրավիճակի մասին, դուբլինյան երկրների տարածքում գտնվող Ձեր ընտանիքի անդամների մասին և հայտնել այդ ամենը Ձեր մայրենի լեզվով կամ այլ լեզվով, որին լավ եք տիրապետում (կամ թարգմանչի օգնությամբ, եթե անհրաժեշտ է): Ձեզ կտրամադրվի նաև Ձեզ այլ երկիր տեղափոխելու մասին որոշման գրավոր պատճենը: Դուք նաև իրավունք ունեք դիմել մեզ՝ լրացուցիչ տեղեկատվություն ստանալու խնդրանքով և/կամ կապ հաստատել այս երկրի ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի (UNHCR) գրասենյակի հետ:

Եթե որոշենք, որ այլ երկիր է պատասխանատու Ձեր դիմումի քննության համար, ապա Ձեզ կտրամադրվի առավել մանրամասն տեղեկատվություն այդ ընթացակարգի մասին և թե այն ինչ ազդեցություն ունի Ձեր և Ձեր իրավունքների վրա:



Կոնտակտային տվյալներ, մասնավորապես՝

Ապաստարանի ղեկավար մարմնի կոնտակտային տվյալներ

Maahanmuuttovirasto(Ֆինլանդիայի ներգաղթի ծառայություն)
PL 10, FI-00086 Maahanmuuttovirasto
+ 358 295 419 600
www.migri.fi

Ազգային վերահսկողության մարմնի (տվյալների պաշտպանության) կոնտակտային տվյալներ

Tietosuojavaltuutetun toimisto
(Տվյալների պաշտպանության հարցերով օմբուդսմեն)
PL 800, FI-00521 Helsinki
+ 358 295 666 700
Տեղեկատու հեռախոս՝
+358 295 666 777
Երկուշաբթի-ուրբաթ 9-11
tietosuoja@om.fi
www.tietosuoja.fi

Eurodac հսկիչի և իր ներկայացուցչի նույնականություն

Կոնտակտային կետեր՝ Ոստիկանության ազգային խորհուրդ (Poliisihallitus) և Ֆինլանդիայի ներգաղթի ծառայություն (Maahanmuuttovirasto)

Վերահսկողի գրասենյակի կոնտակտային տվյալները,
+ 358 295 480 181
Poliisihallitus (Ոստիկանության ազգային խորհուրդ)
PL 22, FI-00521 Helsinki
kirjaamo.poliisihallitus@poliisi.fi

Maahanmuuttovirasto (Ֆինլանդիայի ներգաղթի ծառայություն)
PL 10, FI-00086 Maahanmuuttovirasto
+358 295 419 600
www.migri.fi

Եթե դուք ցանկանում եք տեսնել ձեզ վերաբերող Eurodachամակարգում գրանցված տվյալները, անձնապես հայտ ներկայացրեք ոստիկանության բաժանմունք: Ձեզ հետ ունեցեք անձը հաստատող փաստաթուղթ: Մենք խորհուրդ ենք տալիս, որ դուք կապվեք այն ոստիկանության բաժանմունքի հետ, որն ընդունել է ձեր ապաստարանի դիմումը: Ոստիկանական ծառայության բաժանմունքի կոնտակտային տեղեկությունը հասանելի է Ոստիկանության ինտերնետային կայքում poliisi.fi հասցեով:

Իրավական օժանդակության գրասենյակներ և փախստականների աջակցման կազմակերպություններ

Իրավական օժանդակությունը տրամադրվում է իրավական օժանդակության գրասենյակների և այլ իրավական հարցերով զբաղվող գրասենյակների և փաստաբանների կողմից, որոնք հայտնել են ընդունելությունների կենտրոնին ապաստարան հայցողների իրավաբանական ծառայություններ մատուցելու իրենց ցանկության մասին: Իրավական օժանդակության վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար խնդրում ենք զրուցել ընդունելությունների կենտրոնի անձնակազմի հետ:

Միգրացիայի միջազգային կազմակերպության (ՄՄԿ/ IOM) Ֆինլանդիայի տեղական գրասենյակի կոնտակտային տվյալներ

IOM Finland (ՄՄԿ Ֆինլանդիա)
Unioninkatu 13, 6-րդ հարկ
PL 851, FI-00101 Helsinki
+358 9 684 1150
fiavrrcases@iom.int
www.iom.fi

Եթե դուք ցանկանում ենք կամավոր վերադառնալ ձեր հայրենիք, խորհուրդ հայցեք ընդունելությունների կենտրոնից:

Փախստականների գործերով ՄԱԿ-ի գերագույն հանձնակատարի մոտակա շրջանային գրասենյակ

UNHCR
Sveavägen 166, 15th floor
SE-11346 Stockholm
SWEDEN
Tel. +46 10 10 12 800
swest@unhcr.org

